

ԽՈՒՉԱԿ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Դրուքիւններ, որոնք եւ չեն դարձուիր՝
պէս է խրկել «Խուզակ»ի վարչութեան,
Բուսչոֆ
Administration du Kousag Roustchouk

Պէշկարիոյ հաւաք տարեկան 10 փր.
» » վեցամսեան 5 »
Օսար երկիրներու հաւաք տարեկան 12 »
» » վցմայ. 6 »

Ա Ջ Դ

«ԽՈՒՉԱԿ»ի վարչութիւնը ԲՈՒՍՉՈՒՔ
փոխադրուած է. ուշադրութիւն հոր
հաւցէին:

ՀԻՆՔ ՈՐ ԳԵՐՄԱՆԻԱ

Եւրոպական ապրիլ 10 ին, կէս
գիշերէն երկու և երեք չորրորդ ժամ
յետոյ, Լոդանի կայարանէն կառախում-
բը կ'ըսկսի շարժիլ տանելով իր հետ
չորս հայ ուսանողներ: Առոնցմէ երկու-
քը ժընեվէն են, Ռուսոյի հայրենիքէն:
Արդէն մինչեւ Լոդան 48 քիլոմետր
կտրած են, և այս հեռավորութեան մի
քիչ յոգնութիւնը՝ միանալով գիշեր
ատեն քնանալու անդուստ պահանջին,
իրենց տուած է կէս գուն կէս արթուն
վիճակ մը: Փոխադարձ ձեռքի սեղմում-
ներէ, լաւական ծիծաղաւոր սրտա-
տուրաններէ վերջ, երբ ա'լ վայրա-
շարժը ֆշալով կը սուրար, մեր լարե-
կամները ուղեցին դիրենք յանձնել
Մորիէուի հակողութեան երրորդ կար-
գի վակոնի մի կողմը, բնելով նստա-
րանը անկողին, խնդրելով իրեն բարձ-
րարկամի մը ծունկը, ուսը, վերարկուն,
և կամ տանջելով գլուխին չոր տախ-

տակին կամ կարծր տալուսակի մը
վրայ, վրանին ալ ունենալով վերարկու
մը կամ բրդեղէն ծածկոց մը: Ես գեռ
չէի պատասխանած մոռացութեան գե-
տին քունի հրաւիրող մեղմ մ'ըմունքին:

Փոքրիկ ընդմիջումներէ զատ, լուռ
էին առհասարակ տաններկու կուրծքեր
որոնց չորսը կը պատկանէին գեղեցիկ
սեռին: Գեղնալոյս լապտերները իրեն
խոշոր աչեր կարծես կը հակէին բար-
ձրէն մեր վրայ: Կ'օրուէինք աջէն ձախ
ու ձախէն աջ, կարծես մեր մէջէն յա-
մառ հսկողները քնացնելու համար:
Կը լէի կառախումբին շախախ ձայնը
երբ պատերու յովէն կ'անցնէինք, մի-
օրինակ «կրկր»երը կամուրջներու վ-
րան էինք: Կը տեսնէի երկարածիք ու
թրթռումն շարք շարք գիծեր, որոնք
կը յայտնէին մութին մէջ թաղուած
որմեր, խուսափուկ կարմիր ու սպիտակ
բոլորակ լոյսեր, որոնք կը ցուցնէին մեր
ուզին իլ բեւ արեւ ու լուսիններ: Վօի
քանթոնէն վերջ կը մանենք Ֆրիպուր-
կի գանթոնը, կը արթնանք պանիրին լնա-
զաւառը: Մթութիւնը մեզ կ'արգիլէ
տեսնել իր գեղեցիկ արօտալայրերը,
եղեւինի անտառները: Կը բարձրանանք
հիւսիսային արեւելք և արդէն լոյս է
երբ Պերնի առջեւ ենք, 79 քիլոմետր
հեռի Լոդանէն: Պերն ու իր համանուն

քանթօնին գլխաւոր քաղաքը և 1848 էն իվեր Զուիցերիայի մայրաքաղաքն է, կը գտնուի սարաւանդի մը վրայ, ուրն շուրջը կը գառնայ Ար գետը, Հուդանուէն և Հոննուէն վերջ ամէնէն մեծը Հելուեալիայի մէջ: Կը բխի պերնական Ալպերէն և սուշերով Պերն, Սօլէօր, Արաու, կը թափի Հոննուի մէջ Վալճհուաի մօտ, 279 գիլմետր րնթացքէ մը վերջը Դիտելի է հոս արջերու փութը, ուր կը դոհուին գրեթէ ամէն տարի թշուառներ, որոնք այս կամ այն պատճառով կ'իյնան մէջը: և սակայն հակառակ այս ազդաներուն, թաղապետութիւնը կը պահէ այս մեղրամուլ ու վայրագ գաղաններուն փութը, որովհետեւ արջը Պերնի դինանշանականդանին է: Այս իրողութեան պատճառով շահեկան է. կ'ըսեն թէ ԺԲ դարուն, Չերինկնի դուքսը՝ Նիմմերով այս քաղաքը, չէր գիտար անոր ինչ անուն սալ, և բաւական մտածելէ վերջ որոշեց դայն անուանել այն կենդանիին անունով որ իր հարուածներուն տակ պիտի իյնար, չըջակաները որսորդութիւնը բաժ տանէ: Արջը ունեցաւ այս աղետալի պատիւը. և որովհետեւ զերմաներէն պէր՝ արջ կը նշանակէ, ադկէ կը մնայ հետեւաբար քաղաքին անունը: Բայց այս դուարձալի պատմութեանէն երբ անցնինք ճշմարտութեան, Պերն կը գտնենք Վերօնա անունին գերմանական ձեւը. իսկ արջը լարձրացածէ դինանշանական կենդանիի պատիւին, այն պատճառով որ արջերունախառն բաժ վայրերէն մին և զած է առ ժամանակին:

Նարունակելով մեր ուղին, ուշագրութիւնս կը գրաւեն Պերնի առաւի, կտաւի, լամլակեղենի, մետաքսեղենի գործարաններուն բարձրուղի ծխնելոյգները, որոնք կը յայտնեն մի և նոյն ատեն հարստութիւն ու աղքատութիւն

, վայելում ու դրկում, բռնութիւն ու բողոք, գորութիւն ու իրաւունք, ներկան ու ապագան, թէ և հակադրութիւնը այնքան մեծ չըլլայ հոս որքան քաղաքակիրթ կոչուած ուրիշ արհեստագործական մարդ ուսող վայրերու մէջ:

Կ'անցնինք անտառներու մօտէն, Ժորժորներու ու գետնաղիններու մէջէն սրարչաւ. ամէն ինչ խոյս կաւտար. կարծես ահարկու հրէշի մը ներկայութեան լեզուապատառ խուափէին Մառանոյներ, Համատրիաններ, Լեռանոյներ խոխոմանոյներ: և երկինք ալ իր լալում մօտ գէմբով կարծես արտայայտէր իր անհուն վիշտը այս տիտեր տեսարանին հանդէպ:

Կը մտնենք Պալ, հին Պաղիլիա կամ Պաղիլիա, 75 գիլմետր հեռի Պերնէն: Իր լաղմաթիւ, մանաւանդ ժապաւէնի գործարանները, ուր կը ծառայեն 3, 000 էն աւելի բանուորներ, կը մատնեն անոր արհեստագործական ու առեւտրական քաղաք մ'ըլլալը, ամէնէն առաջինը՝ այս տեսակէտով Զուիցերիայի մէջ:

Պալ տուած է մարդկութեան փառաւոր դաւակներ. հոս ծնած է Հուպէյն նշանաւոր նկարիչը, 1495 ին, որո ժամատախտը չարչարելով մեռցուց 1554 ին Լոնտոնի մէջ. հոս առաջին անգամ լոյս տեսաւ ԺԲ. դարուն անուանի երկրաչափ Էօլը, որ ապրեցաւ Բեթերսպուրկ. հոս թոթովեցին առաջին թիւերը մաթեմատիկոս Պերնուի եզրայրները:

Պալ սահմանադուխ ըլլալով, կանդկ'աւնէ այս տեղ գուիցելական երկաթուղին. ինչ վերջ պիտի մտնենք ուրիշ երկիր: Մինչեւ այժմ անցանք փոքրիկ հանրապետութիւններէ, որոնք գուիցերական Դաշնակցութեան թանկագին շղթային ուկէ ռզակները կը կաղմեն. այնտեղ «ընդհանուր» գուէարկութիւնն է որ կորոշէ իւրաքանչիւր հանրապե-

սուլթանն օրէնդիր ու գործադիր մարմինները, իշպէս նաեւ ամլոյ՛ Պաշնակցութեան. հոն կան համարաբարներ, միջնակարգ, նախնական և արհեստական վարժարաններ, լուսամիտ ու դիւրակեցիկ քաղաքացիներ պատրաստելու համար. հոն ընդունուած է սկզբունքով խիղճի, միտքի, խոսքի աղատութիւնը, ինչպէս նաեւ աշխատութեան սրբութիւնը: Ուրիշ տոեանի կը թողունք ցուցնել թէ ո՛ր աստիճան կը համապատասխանեն ժամանակիս բաղմադիմի ու ճշմարիտ պահանջներուն այս քաղաքական, կրթական, արհեստական, բնկերական հաստատութիւնները ու կարգերը:

Ուրիշ երկաթուղի մը մեզ կը հասցնէ գերմանական կայարանը Հոենտսի վրայէն անցնելով: Տեսնա՛ք վեհափառ Հոենտսը, հանդարտ ու անտարբեր իր ընթացքին մէջ, լայն 190 մետր գրեթէ: Յոգնած կ'երեւի և արդէն 340 քիլոմետրի չափ երկար ընթացք մ'է ունեցած միշտ հոս, բխելով Սէն Կլոմար լեռնախումբին արեւելեան կողին վրայ գտնուող Թոմայի լիճէն, անցնելով Կրիզոնի Քանթօնին մէջէն և թրջելով Զուիցերլանդի գրեթէ արեւելեան և հիւսիսային սահմանագլուխները:

ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

ԵՒ ԻՐ

ՏՐԱՄԱՐԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՒՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շար. նախորդ քիւռն)

Վարդել գողնալու իրաւունքը՝ նոյն իսկ բացարձակ չքաւորութեան պարագային մէջ, մեզ կ'ընէ քիչ գովելի բան մը, մինչեւ անգամ անբարոյական:

Սակայն ինքզինք պաշտպանելու համար,

այսպիսի բնաբան մ'օրինաւոր է, երբ ընկերութիւնը բան մը չընէր երաշխաւորելու համար անհատներուն՝ աշխատութեամբ ապրելու իրաւունքը:

Տեսէ՛ք թէ ո՛րքան մարդս անհամաձայն է ինք իր հետ: Պարկեշտ, աշխատասէր գործաւոր մը՛ իր կամքէն անկախ պարագայով մը, կը գտնուի անգործ:

Իգուր գործ կը բնառէ եւ բնա՛ւ չգտնէր: Իր բանեցուցած արհեստագործութիւնը կը հանդիպի ճգնաժամի մը. խնայած ստակ չունի: Ի՞նչ ընել: Երթալու է ուրիշ գործ մը փնտռել, ըն՞ել ի՞նչ կ'ուզէ ըլլայ: Բայց ամէն տեղ բազուկներու յորգութիւն կայ: Ամէնէն հարուստ երկիրները՝ իրենց անգործներու բանակը ունին:

Այս գործաւորը անօթի է, նոյնպէս իր զաւկները: Ընկերութիւնը բան մը չընէր իրեն համար: Եւ, տարօրինակ բան, այս մի եւ նոյն ընկերութիւնը կ'ապահովէ ոճրագործներուն, մարդասպաններուն ու գողերուն սնունդը եւ բնակարանը:

Պուրժուական ընկերութիւնը կ'ըսէ պարկեշտ բանաւորներուն որոնք կ'ուզեն ապրիլ աշխատելով. «բան մը չեմ կրնար ընե՛ ձեզի համար: Բայց եթէ գողնաք, կամ եթէ մէկը սպաննէք, այն ատեն բանտերուս մէջ պիտի ունենաք ուտելի՛ք եւ խմելի՛ք, եւ գոնէ այնքան լաւ բնակութիւն որքան ձեր տանը մէջ:»

Իրականապէս մոլութեան, ոճիրի քաջալերել է՛ ասիկայ:

Ի՞նչպէս. այսօր կը պարծին, եւ իրաւամբ, բանաւորներուն գրութիւնը աւելի քաղցր, աւելի մարդկային ընկնուն համար: Կ'ուզեն նորաձեւել արդարութիւնը, ոճրագործներուն վիճակը նուազ ծանր, նուազ տաժանելի դարցնել, բայց բ՛ան մը չեն գտներ ընելու պարկեշտ միացած անհատներուն համար, բան մը չեն ընէր որպէսզի անոնք կարենան պարկեշտ մնալ, որպէսզի գողութիւններուն եւ ոճիրներուն առջն աւնտի:

Մոլորո՞ւմ մ'է ասիկա:

Ինչ ընել ուրեմն:

Ապրելու իրաւունքը բացարձակապէս ճիշդ է, բայց պէտքէ զայն նուիրագործել ոչ թէ գողնալու իրաւունքով այլ Աշխատելու իրաւունքով, որ առաջինին տրամաբանական հետեւութիւնն է եւ օրինաւոր միայն:

1848 փետրուար 24 ին, երբ Բարիզի ժողովուրդը հրատարակած էր հանրապետութիւնը, խնդրեց բարեգեան կառավարութեանէն խոստանալ հանգիստութիւն կերպով՝ ամէնուն ապահովելու աշխատեցող իրաւունքը։ Ապրիլ աշխատեցող, ահա ինչ որ կը պահանջէր այս յայտարարութիւնը որ քիչ մ'առաջ թափած էր իր արիւնը նոր հանրապետութեանը համար։

Ասոր վրայ շատ վիճարանեցան, եւ դեռ այսօր անոնք՝ որ մեր քրիստոնեայ հանրապետականներուն պէս եկեղեցական հայրերէն վերջը կ'ընդունին զոգնալուն իրաւունքը, չեն ուզեր բնաւ ճանչնալ աշխատելու իրաւունքը։

Փետրուար 26 ին, հանրապետութեան հրատարակումէն երկու օր վերջը, առժամեայ կառավարութիւնը կը հռչակէր աշխատելու իրաւունքը տալով հետեւեալ վճիռը։

«Պրահայի հանրապետութեան Առժամեայ կառավարութիւնը կը խոստանայ երաշխաւորել զործաւորին զոյու թիւնը աշխատութեամբ։

«Իր խոստանայ աշխատութիւն երաշխաւորել բոլոր քաղաքացիներուն։

«Կ'ընդունի որ զործաւորները պարտին իրենց մէջ ընկերակցիլ վայելելու համար իրենց աշխատութեան օրինաւոր վաստակը»

Դժբաղդաբար, այս տեսակ բարենորոգումներ անմիջապէս չեն պատրաստուիր մէկ օրէն միւսը, եւ զրեթէ անկարելի է դանոնք զործաւորութեան պէտք մ'օրվեր յեղափոխութենէ մ'որ արդէն յուզում ձգած է ընկերութեան բոլոր դասակարգերուն մէջ։

Հաստատեցին Բարիզի մէջ ինչ որ անուանեցին Ազգային զործաւորները։ Այս զործաւորներուն պատմութիւնը ողբալի է։ Չվիրաւորելու համար զործաւորներուն անձնասիրութիւնը, չգաղտնի համար անոնց արժանապատիւ թեան, աշխատեցին այս զործաւորները բայց անօգուտ աշխատութեան մը։

Վարպետները, արհեստագործները՝ կրելով քաղաքական տաղնապին հակահարուածը, տեսան զործերուն դադրելը եւ գոցեցին իրենց զործատուները։ Ասիկայ նետեց քարայտակին վրայ ստուար թիւով զործաւորներ, որոնք ապրելու համար, կ'երթային աշխատութիւն խնդրելու ազգային զործաւորներուն մէջ որոնք շատ չանցած կը հաշուէ-

ին յունիսի սկզբը 100, 000 աշխատաւորներ։ Գիտենք թէ ի՞նչ հետեւեցաւ ապիւշ։

Յունիսի օրերուն եւ հանրապետութեան անկումին պատասխանատուութիւնը ամբողջովին կ'իյնայ պուրժուաներու քաղաքագէտներուն վրայ որոնք՝ գոհ ընելու համար զործաւորները, զործածեցին սին բանաձեւեր զորս իրականացնելու անկարող էին։

Աշխատելու իրաւունքի գաղափարը յառաջ գիտութիւններ ըրաւ 1848 էն իվեր

Զուիցերիայի դաշնաւ բական խորհրդարանները մօտեւս քննելու խնդիր մը ունեցան, զոր ներկայացուցած էին 52, 000 ազգաբնակիչներ։ Իրենց ազգաբնակիչին բնագիրը այսպէս խմբագրուած էր.

«Բաւականօրէն վարձատրուող աշխատեցող մ'իրաւունք երաշխաւորուած է ամէն զուիցերացի քաղաքացիի։ Դաշնաւորական օրէնսդրութիւնը եւ քանթոններու ու համայնքներու օրէնսդրութիւնը պարտին ամէն կարելի միջոցներով իրական դառնել այս սկզբունքը։

«Մասնաւորապէս, հարկ կայ հետեւեալ միջոցները ձեռք անելու.

«Ա. Աշխատութիւնը աւելի առատ ընելու յարմար նախադրուելութիւններ, մասնաւորապէս վերածելով աշխատութեան ժամերը այնքան ճիւղերու որքան որ կարելի է։

«Բ. Հաստատել պէտք ունեցողներուն ճիւղաբար զործ հողաւու տահմանուած հաստատութիւններ, օրինակի համար ուղղակի զործաւորներուն ձեռքին մէջ դրուած աշխատութեան հողներ (bours)։

«Գ. Օրէնքով պաշտպանել այն զործաւորները, որոնց ձամբայ կը տրուի անիրաւ տեղը։

«Դ. Ապահովել զործաւորները՝ բաւարար կերպով մը, զործի պակասութեան հետեւանքներուն դէմ, կա'մ հանրային ազահովադրութիւն մը, կա'մ հանրային միջոցներով ապահովագրելով զործաւորները մասնաւոր հաստատութիւններու։

«Ե. Գործնականապէս պաշտպանել ընկերակցութեան իրաւունքը, այնպէս ընելով որ ընկերակցութիւններու կազմութիւնը՝ որ նպատակ ունի զործաւորական շահերը պաշտպանելու վարպետներուն դէմ, բնաւ չարգելուի, ինչպէս նաեւ այս ընկերակցու-

թիւներու յարումները:

«2. գործաւորներու պաշտօնական իրաւատւութեան մը հաստատումը վարպետներու հանդէպ, եւ գործարաններու աւ գործատուներու մէջ աշխատութեան հանրաժարական կազմակերպութիւնը, մանաւանդ Պետութեան եւ համայնքներուն վերաբերածներուն մէջ:»

Այս խնդիրին վրայ տեղեկագիր մը պատրաստելը յանձնուեցաւ Ազգային խորհրդի(Ազգային ժողով)* յանձնաժողովին որ որոշեց մերժել աղերասրկուններէն օրինաւորուած առաջարկութիւնները: Յանձնաժողովը՝ սակայն եւ այնպէս, ջորեկայ անպայման եւ պարզ կերպով մերժել: Ի՞նչ խնդրէ որ Դաշնաւորական Սորհուրդը(գործադիր խնամութիւն) հրաւիրուի, 1 կարելի եղածին չափ շուտով ներկայացնելու տեղեկագիր մը եւ առաջարկութիւններ այն եզրանակի մասին որով Դաշնակցութիւնը պիտի կրնար օգնութեան հասնիլ քանթօններէն, համանքներէն եւ ընկերութիւններէն հիմնուած հաստատութիւններուն, կռուելու համար անգործութեան (chômage) դէմ: 2 Դժնուլու թէ ի՞նչպէս Դաշնակցութիւնը պիտի կրնար նպաստել աշխատութեան հոգանքի ստեղծելու, ինչպէս նաեւ անգործութեան հետեւանքներուն դէմ գործաւորը ապահովելու յատուկ միջոցները հետազօտելու:

1894 յունիս 3 ին, զուիցերիացի ժողովուրդը՝ հրաւիրուելով իր կարծիքը յայտնելու այս խնդիրին մասին, պատասխանեց ոչ 292,000 քուէով 27,500 քուէի դէմ:

Այն օրէն իվեր, շատ մը քանթօններու մէջ խօսք կայ անգործութեան դէմ պատրաստելու ապահովագրական արկղներ:

Բայց վերադառնալով մեր նիւթին:

շարունակելի

Ի՞նչ է ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԴԵՐՈՒ ԵՒ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ

(Շար. Ասիւորդ քիւէն)

Այդ հոգին վրայ դնելով հարցը արդէն նախապէս մենք կրնանք ըսել որ կենդանիներու մէջ կարող են գոյութիւն ունենալ բարոյական եւ անբարոյական գործողու-

թիւներ, եւ հետեւեալ փաստերէն մենք կը տեսնենք որ այո՛ անոնք գոյութիւն ունին ու բազմաթիւ սկզբնական վայրերիններու բարոյականութեան հետ զանազանութիւնը աննկատելի, այնքան աննկատելի է որ ստիպուած ենք ընդունիլ անոնց մի եւ նոյն կերպով առաջ գալը անընդհատ զարգացման շնորհիւ:

Արդէն բարոյականութեան մասին մեր բոլոր ըսածներէն պարզ է որ նա կրնայ գոյութիւն ունենալ միայն խումբերու մէջ, եւ մենք ուրեմն պէտք է փնտռենք փաստերը խումբերով ապրող կենդանիներուն մէջ: Իսկ ո՞վ չգիտեր որ այդպիսիներու մէջ ծնողական սէրը՝ օրինակի համար, կը հասնի մինչեւ հերոսութեան: Շատ թռչուններ երբ կը տեսնեն որ իրենց ձագերը ենթարկուելով ցուրտի եւ անձրեւի պիտի մեռնին, իրենց մարմինով կը ծածկեն թշուառները եւ զիրենք զոհելով կ'ազատեն նոր սերունդը: Վերաւորուած կապիկ մը մինչեւ վերջը կուրծքին վրայ սեղմած էր իր ձագը եւ վերջը տեսնելով որ ուշ կամ կանուխ պիտի մեռնի, կը ժողվէ իր վերջին ուժերը, կը նետէ իր ձագը բարձր ճիւղերու վրայ եւ ինք մեռած կ'իյնայ: Մի եւ նոյն անձնազօնութիւնը կարելի է նկատել գիշատիչ կենդանիներու մէջ: Թէ ո՛րքան վառ է զաւակներու սէրը սպիտակ արջերու մէջ ցոյց կուտայ հետեւեալ դէպքը: Արջին մէկը՝ զոր կը հալածէին երեք որսորդներ եւ խումբ մը շուներ եւ քիմացիներու, բոլորովին չէր պաշտպաներ ինքզինք այլ մանաւանդ կը մոռնէր իր ձագին պաշտպանութեան վրայ: Ինչո՞ւ հարուած ստանալէ յետոյ վերջապէս կ'իյնայ, շուները գրեթէ կ'իսամահ կրնեն ձագը, եւ երբ մայրը կը տեսնէ իր զաւակը աչքին առաջ անշարժ ինկած, կը մոռնայ ամէն ինչ եւ ժողվելով իր վերջին ուժերը կը սկսի լզել անոր վէրքերը: Թողունք զաւակներու սէրը:

Սուրբին մէջ տկարները, ծերերը կը մնան բոլորովին անխնամ, աչքէ ընկած եւ շատ անգամ կերակուրի տեղ կը ծառայեն, ինչպէս մարդկային շատ սկզբնական ընկերութիւններու մէջ: Բայց ատիկայ դեռ չնշանակեր որ ընկերական պարտականութիւնները՝ մինչեւ այլասիրութեան (altruisme) աստիճանը հասած, գոյութիւն չունին առաստաւներու մէջ: Շատ անգամ պատահած

է տեսնել թէ ի՞նչպէս փորձառու նապաստակներ՝ որպէս զի զգուշացնեն իրենց երբ-տասարդ ընկերները, ազմուկ կը հանեն, որով զո՞հ կ'երթան գրաւելով որսորդի ուշադրութիւնը: Երկու փիղ միասին կ'իյնան թակարդի մը մէջ, մեծ փոս մը ծածկուած ճիւղերով. անոնցմէ մին կը յաջողի կերպով մը փոսէն ազատիլ եւ փոխանակ փախչելու ու բոլորովին ազատուելու կ'օգնէ իր ընկերին եւ իր կնճիթի միջոցաւ զայն կը փրկէ: Վերջապէս պակաս չեն թռչուններու կեանքէն ալ օրինակներ: Շէկ տարդիկներու (grives rousses) բոյնին մէկին վրայ կը յարձակի օձ մը. արուն կը պաշտպանէ բոյնը որքան որ կրնայ. ուրիշ արու մը լսելով իր ցեղակիցի յուսահատական աղաղակները օգնութեան կը հասնի եւ զո՞հ կ'երթայ: Պէտք է նկատի առնել որ բարոյականութիւնը չզարգանար կենդանիներու սխթեմական զարգացման համեմատ: Կենդանիներու բարոյականութիւնը զարգացած է այն աստիճան որքան որ ամուր եւ հիմնական է եղած անոնց հասարակական կեանքը եւ այդ պատճառով մեղուներու եւ մրջիլներու ընկերութիւնը առաջին տեղը կը բռնէ: Թէ ի՞նչպէս առաջիւնները՝ անձնութեամբ կը պաշտպանեն իրենց թագուհին օտարներու յարձակումէն եւ թէ վերջինները կը պաշտպանեն մրջնանոցի հարստութիւնը կազմող լուիճները, այդ բոլորը լաւ յայտնի է ամէնուն: Մենք նպատակ չունինք կենդանիներու բարոյականութեան ամփոփ պատկերը տալ. բայց այս տիպական գէպքերու վրայ հիմնուելով մենք կրնանք եզրակացնել որ ընտանիքի, իր նմաններուն, ազգակիցներուն համար զոհուելու բարձր յատկութիւնները միայն մարդկութեան մենաշնորհը չեն կազմեր: Այս փաստերու շարքը վերջացնելէ առաջ քանի մը խօսք ըսենք այն զգացումի մասին որուն տեսակ մը անբացատրելի, եթէ չըսենք գերբնական, բնաւորութիւն կուտան շատ ու շատ զարգացած գիտնականներ եւ մանաւանդ երիտասարդներ: Ատիկայ սէրն է: Բազմաթիւ նախապէս ենթադրելներէ պարզ է որ պէտք է որ զայն իջեցնել այդ վսեմ պատուանդանէն: Բայց ինչ որ ամէնէն աւելի համոզիչ է, ատիկայ՝ կապիկներու ամուսնական սէրն է որուն նկարագրութիւնը մենք կը գտնենք Պ. Գարնէրի գործին մէջ: Նա կը պատմէ թէ ինք շատ

անգամ զիտած է իր կապիկներու յարաբերութիւններուն մէջ բուն իսկ մարդկային յատկութիւններ: Անոնցմէ մին—էգը կը հիւանդանայ. ամբողջ հիւանդութեան միջոցին գրկուած կը մնայ իր սիրելի ընկերէն, որ Պ. Գարնէրէն զատ մէկու մը չէր թողուր հիւանդին մօտենալու: Վերջապէս հիւանդը կը մեռնի. արուն կը հրաժարի կերակուր ընդունելէ, եւ ինչպէս որ կը հաւտացնէ, անոր երեսի վրայ կարծես կ'արտայայտուէր ամբողջ մի հոգեկան փոթորիկ: Երբ գիտիլ կը հետացնեն, նա կը սկսի ոռնալ եւ խրդալի ձայներ հանել մինչեւ որ զայն կ'արձակեն վանդակէն. եւ նա կուգայ ու տառապանքէն ջախջախուած կ'իյնայ մեռածին քով: Երկար կը տեւէ կսկիծը բայց ոչ անվտխճան. շուտով Պ. Գարնէր անոր կուտա նոր ընկեր մը, որ առանց գիտարութեա կը գրաւէ մեր հերոսին վառ սիրտը:

Մեզ համար բարոյականութեան անընդհատ զարգացումը աւելի կը պարզուի եթէ թեթեւ ակնարկ մը ձգենք մարդկային ստորին ցեղերու բարոյականութեան վրայ զոր Լըգուռնօն իրաւամբ անասնական կ'անուանէ: Անոնք մարդակերներ են եւ մարդկային կեանքը բնաւ արժէք մը չունի անոնց համար. գողութիւնը շատ ու շատ երկիրներու մէջ կը սեպուի քաջագործութիւն: Ամբողջ Մանիլային մէջ տկարները կամ ծերերը կը թողուին անխնամ կամ կ'ուտուին: Բոլոր նախնական խումբերու մէջ, թէ՛ ծնունդիք եւ թէ՛ ծնած տղաքներուն կեանքը կը զոհուի առանց ընկերական բարոյականութեան զգչելու: Այս բացասական գիծերուն կարելի է աւելցնել քանի մը գրականներ ու մենք կը ստանանք զաղափար մը այդ բարոյականութեան վրայ: Բոլոր այդ գրական գիծերը կարելի է ամփոփել երեք բանաձեւերու մէջ—Հնազանդիլ տիրող ամէն ինչի. Հսպանիկ գիտութեամբ եւ երբ ատիկայ շատ սուղի չնստիր. յարգել խումբի կամ տոհմի սեփականութիւնը մանաւանդ կիները: Մեզ պարզ է որ բարոյականութեան բնաշրջումին մէջ չենք կրնար զանազանութիւն գտնել կենդանիներուն եւ մարդերուն մէջ: Այժմ անցնելով կրօնական զարգացման խնդիրին զոր Փաթրիքիոսը կ'ընդունի այդ երկու աշխարհները իրարմէ զատելու իրրեւ միակ կէտ, կը տեսնենք որ խնդիրը աւելի կը բարդուի:

(Շարունակելի)

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ

ՓՈՂՈՎՐԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՐ

Ն Ե Ր Ա Մ ՈՒ Թ Ի Ի Ն

(Շար․ քիւ 3)

Բ.

ԿԱՆՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅ

Այն ուսումնասիրութեան մէջ՝ որուն պիտի նուիրենք մեզ, առաջնորդող թել մը մեզ անհրաժեշտ է։ Բայց նախ եւ առաջ, կարծուածին չափ գիտեալք է այս ուսումնասիրութիւնը, եւ ճշմարիտ է, ինչպէս անգղար կը կրկնեն, թէ երբեք փիլիսոփաները չկրնալով համաձայնիլ իրենց մէջ՝ եղած են այքան դրուժիւններ որքան խորհողներ եւ թէ հետեւաբար այս դրուժիւններուն պատմութիւնն մէջ ամէն ինչ քառս է եւ անխիստութիւն։

Այս գիրքը ամբողջ պիտի ապացուցանէ զայն կարգալու համբերութիւն ունեցողին թէ, հակառակ անթիւ երանգներուն, միայն երեք մեծ դրուժիւններ եղած են։

Ասիկայ ապացուցանելու համար՝ պիտի ստիպուինք քիչ մը հոգեքանութիւն ընելու։ Ձանսնք որ փիլիսոփայական եղանակներուն այս առաջին գործածութիւնը՝ ընթերցողին աչքը չվարկնէ։

Ինչի միջոցով կը ձանչանք մենք իրերը։ Մեր մտաւորական կարողութիւններուն միջոցով։ Բայց այս կարողութիւնները՝ մի եւ նոյն բնութիւնը չունին։ Ճանալու մեր կարողութիւնը կը յայտնուի երեք զանազան կերպերով, երեք կերպերով, ո՛չ աւելի ո՛չ պակաս, այսինքն։

1 Չգացող քիւն. տյապէս կ'անուանենք այն կարողութիւնները, որոնցմով կը հասնինք մեր զգայարաններուն տակ իյնող իրերը ձանչնալու, ինչպէս գոյն, մեծութիւն, եւ այլն, եւ այլն, բոլոր բաները՝ որոնք կրնան աւելնալ կամ պակսիլ, եւ հետեւաբար կ'արտայայտեն թիւի կամ քանակութեան գաղափարը։

2 Բանականութիւն. այս բառը յոռի է, որովհետեւ կը յիշեցնէ տրամաբանելու զօրութիւնը, միջոցեւ հոս մեր ձանչնալու միջոցներուն վրայ է խնդիրը։ Սակայն սովոր-

ութիւնը մեզ օրէնք կը դնէ զայն գործածելու։

Երբոր կը քննենք մէկ էակ մը, մէկ կենդանի մը, կ'ունենանք մեծութեան, գոյնի եւ այլնեք զգայական (sensible) գաղափարներ. բայց, ազկէ զատ, բացարձակօրէն որոշուած մէկ էակի մը կ'ուզենք այս յատկութիւնները։ Այդ էակին մէջ կորուչենք, այս ունեցած յատկութիւններէն զատ որոնք սակայն կրնան տարբրիլ բան մը՝ որ կը հաստատէ թէ ինքնէ եւ ոչ ուրիշ մը, թէ ինքնէ եւ չկրնար եղածէն ուրիշ մէկը ըլլալ, բան մը՝ մէկ խօսքով, որ կը կազմէ իր անհատաւորութիւնը (individualité)։

Այս մէկ բանին ծանօթութիւնը մեզ չգար զգայարաններէն, եւ ատոր ապացոյցը այն է որ անհատաւորութիւնը ընդունակ չէ աւելնալու կամ պակսելու, ինչ որ են գայական գաղափարները. անտեղի պիտի ըլլար, օրինակի համար, ըսել թէ ես եմ առաւել կամ նուազ ես։ Անհատաւորութեան յատուկ նկարագիրն է պարզութիւնը, միութիւնը։ Ահա ինչո՞ւ համար, ամէնանգամ որ կը խօսինք բանի մը վրայ զոր կ'ըմբռնենք իրեւ անհատաւորութեամբ օժտուած, կը գործածենք մեկ բառը—եզ մը, ծառ մը, մարդ մը։

Այն կարողութիւնը՝ որուն միջոցաւ կը ձանչնանք իրերուն միութիւնը, ինչ որ անոնց է քայքայման, այսինքն անկախ եւ ոչ ընդունակ աւելնալու եւ պակսելու, է որ համաձայնած են քանակականութիւն անուանելու։

3 Չգայուն. խիստ գէշ բացատրութիւն մ'ալ, որովհետեւ այս կը տարուի երկու շատ տարբեր բաներու—մեր կարեկան (affective) կորողութիւններուն եւ մեր ձանչնալու միջոցներէն մէկուն։

Չգացողութիւնը եւ բանականութիւնը մեզ որոշել կուտան իրերը իրարմէ բանականութիւնը՝ բացարձակ կերպով մը, զգացողութիւնը՝ յարաբերական կերպով մը։ Բայց, իրերը լաւ ձանչնալու համար, բաւական չէ գիտնալ թէ ինչո՞ւ իրարմէ կ'որոշուին, պէտք է գիտնալ նաեւ թէ ինչո՞ւ իրարու կը նմանին. պէտք է ձանչնալ այն յարաբերութիւնները, զորս անոնք ունին ուրիշ իրերու հետ։ Արդ, յարաբերութիւններու ծանօթութիւնը չկրնար վերագրուիլ ո՛չ զգացողութեան եւ ո՛չ ալ բանականու-

թեան: Բանականութեան, ասիկայ յայտնի է քանի որ մեզ կը յայտնէ միայն բացարձակ ասարեբութիւններ, զգացողութեան, ասիկայ ալ յայտնի է, քանի որ ինչ որ կարելի է ըսել իր մասին, թէեւ մեզ կը ճանչցնէ միայն իրեր որոնք կը տարբերին առաւելով կամ նուազով եւ հետեւաբար կրնան կարգ մը նկատումներով իրարու նմանիլ, այն է թէ զգացողութիւնը մեզ կը ցուցնէ նմանող իրեր, բայց, ինչ որ բուն իսկ նմանութեան վրայ է, որ անտարակոյս զգայարաններուն տակ զալու հանգամանքը չունի, զ'ա անմատչելի կը մնայ անոր:

Այն կարողութիւնը՝ որուն միջոցաւ կ'ըմբռնենք նմանութիւնները, պատշաճութիւնները, կամ յարաբերութիւնները, է որ առած է զգացում անունը:

Այս այսպէս ընդունելով, եւ մենք ներում կը խնդրենք այս վերլուծման համար որ մեզ անհրաժեշտ երեւցաւ, ամէն ոք կ'ըմբռնէ որ եթէ բոլոր մարդիկ հաւասարապէս զործածէին, իրերը լու ճանչնալու համար, իրենց զգացողութիւնը, իրենց բանականութիւնը եւ իրեց զգացումը, անհատական ընդունակութիւններէն առաջ եկող երանգներէն զատ, ամէնն ալ իրերը պիտի ճանչնային մի եւ նոյն կերպով: Իւրաքանչիւրէն ստացուած ծանօթութիւնները պիտի ըլլային առաւել կամ նուազ յստակ, առաւել կամ նուազ ընդարձակ, նայելով զարգացման աստիճանին զոր իւրաքանչիւրը տուած է իր մտաւորական կարողութիւններուն, բայց, խորը քննելով, այս ծանօթութիւնները պիտի ըլլային ամէնն ալ մի եւ նոյն բնութեամբ:

Եթէ այսպէս չէ, եթէ մի եւ նոյն նիւթին վրայ տարբեր գաւառութիւններ կ'ընենք, պատճառն այն է որ աւելի կարեւորութիւն, Կուտանք (կամ նոյն իսկ առանձին կարեւորութիւն մը) անոր որ կը ոտրվինք մեր կարողութիւններուն մէկուն միջեցաւ քան անոր որ կը սորուինք միւս երկուքին միջոցաւ: Արդ, փիլիսոփայական գրութիւնները ըլլալով միայն անհատական գաւառութիւններու համակարգեալ (coordonné) ամբողջութիւնը, կրնան իրենց մէջ ունենալ միայն այն տարբերութիւնները, որոնց մով կը զանազանին նոյն իսկ այս գաւառութիւնները:

Ուրեմն շատ իրաւամբ է որ կը կրկնենք թէ գոյութիւն կրցած են ունենալ միայն

երեք մեծ գրութիւններ—մին՝ յատկանիշ սահմանալով առաւել կամ նուազ մեծ գերակշռութիւնը կամ նոյն իսկ զգացողութեան շնորհուած առանձին վստահութիւնը, զգայականութիւնը (sensualisme) է կամնիքսպաշտութիւնը, որուն կրօնական ձեւն է մարդակերպութիւնը, կամ աստուածացեալ մարդու պաշտումը, միւսը՝ յատկանիշ ունենալով բանականութեան գերակշռութիւնը կամ մեկուսականութիւնը (exclusivisme), հոգեպաշտութիւնն է, որուն վերջին ծայրն է իսկականութիւնը եւ որուն կրօնական ձեւն է գերբնականութիւնը կամ պաշտել աստուած մ'որ բացարձակապէս ոչինչ ունի մարդկային եսութենէն, վերջապէս երրորդ՝ յատկանիշ ունենալով յարաբերութիւններու զգացման գերակշռութիւնը կամ մեկուսականութիւն, հաւնախառնութիւն (syncretisme) է, որուն կրօնական ձեւն է հաւնաստուծութիւնը, կամ պաշտել Աստուած մ'որ կը խառնուի աշխարհի հետ:

Փիլիսոփայութեան պատմութիւնը Կրնայ ուրեմն ըլլալ միայն այս մեծ երեք գրութիւններուն զարգացումներուն եւ խառնումներուն պատմութիւնը: Այսպէս հասկնալով, այս պատմութիւնը՝ որ կ'երեւէր ա'յնքան դժուարին եւ ա'յնքան կնճառ, կը պարզուի եւ կը պահանջէ, յիշողութեան մէջ տպաւորուելու համար, շատ աւելի քիչ ջանք որքանը բաւական չէ յիշելու համար հին ազգերուն եւ արդի ժողովուրդներուն տարբերութիւններուն հազար ու մէկ կնճառութիւնները:

Պէտք է սակայն զգուշանալ այս բաժանման շատ բացարձակ արժէք մը տալէն: Երեք մեծ գրութիւնները, զորս թուեցինք, իրարու չեն յաջորդեր ժամանակագրական կարգով, մին երեւնալով միայն միւսներուն անկումէն վերջը: Անոնցմէ իւրաքանչիւրը յաջորդաբար տիրած է, բայց բոլոր երեքն ալ զանազան աստիճաններով, միշտ մի եւ նոյն ատեն բաժնած են իրենց մէջ միաբերը: Եւ տարբեր ալ չէր կրնար ըլլալ, որովհետեւ, քանի որ անոնցմէ իւրաքանչիւրը կը համապատասխանէ մեր իսկական կարողութիւններէն մէկուն, անոնցմէ եւ ոչ մին չէր կրնար կատարելապէս ջնջուիլ էւ աներկութեանալ:

շարունակելի

Отговорникъ Д. Кодаровъ.